ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Արմենուհի Ծաղիկյան, Մակրոտնտեսական քաղաքականության վարչության Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2023 թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 6-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Մակրոտնտեսական կառավարումը ռեսուրսներով հարուստ երկրներում» խորագրով դասընթացին, որի ընթացքում ներկայացվել է այն հայեցակարգերը և գործիքները, որոնց միջոցով հնարավոր կլինի վերլուծության ենթարկել ռեսուրսներով հարուստ երկրների մակրոտնտեսական կառավարումն ու հարկաբյուջետային քաղաքականությունը, թե ինչպես ճիշտ կառավարումը կարող է ապահովել մակրոտնտեսական կայունություն և կայուն երկարաժամկետ տնտեսական աճ: Քննարկվել և վերլուծվել է ռեսուրսներով հարուստ երկրներում տնտեսական գործունեության տարբերությունները այլ երկրների համեմատ, կիրառել պարզ ֆիսկալ կանոններ, նախագծվել հստակ նպատակներով և առաջնահեր-թություններով երկարաժամկետ հարկաբյուջետային կայունության ապահովման ծրագրեր, որը հաշվի էր առնում ապրանքների գնային տատանումները և ուղղված էր աջակցելու պետական հատվածին և կառավարության ծախսերի հաշվարկմանը, գնահատվել է բնական ռեսուրսների կառավարման ոլորտի դիվերսիֆիկացիայի և թափանցելիության մակարդակների բարձրացմանն ուղղված քաղաքականությունների առավելությունները և թերությունները: Քննարկվել են ռեսուրսով հարուստ երկրների ծախսային և հարկային քաղաքականությունները, կայունացնող ֆոնդերի ազդեցություններն ու դրանց բարեփոխումների հնարավոր ուղղությունները, որոնք կհանգեցնեն ներառական աճի ապահովմանը: Ներկայացված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ քննարկված գործիքակազմի գործնական կիրառմամբ:

Ընդհանուր առմամբ, դասընթացը համապարփակ կերպով ամփոփել է ռեսուրսով հարուստ երկրների մակրոտնտեսական կառավարման հիմնական հայեցակարգերը և գործիքակազմը՝ ներկայացնելով մակրոտնտեսական քաղաքականության հիմնախնդիրներն ու մարտահրավերները:

5. Քննարկված թեմաները՝

1. Բնական ռեսուրսներ. «Ռեսուրսների անեծքը», Բնական ռեսուրսներով հարուստ երկրներում մակրոտնտեսական քաղաքականության կառավարում

3. Տնտեսական աճ և բնական ռեսուրսներ
4. Տնտեսական դիվերսիֆիկացում և բնական ռեսուրսներ
5. Ներառական աճ և բնական ռեսուրսներ
6. Հարկաբյուջետային քաղաքականության հենանիշներ. սպառման կամ խնայողության ի՞նչ մակարդակ է անհրաժեշտ, պետական ներդրումների դերը
7. Հարկաբյուջետային շրջանակները ռեսուրսներով հարուստ երկրներում:
8. Ազգային բարեկեցության հիմնադրամներ
9. Դրամավարկային և արժույթային ռեժիմները ռեսուրսներով հարուստ երկրներում
10. Բնական ռեսուրսների հոսքերը կառավարելու մակրոտնտեսական և ֆինանսական քաղաքականություն
11. Հարկային քաղաքականության ռեժիմները և բնական ռեսուրսների կառավարման թափանցիկությունը
12. Սուբսիդավորման բարեփոխումները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացով նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ մշակված գործիքակազմով ներկայացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով: Յուրաքանչյուր գործնական աշխատանք ամփոփվում էր ստացված արդյունքների քննարկմամբ: Մասնավորապես, որպես դասընթացի ամփոփում, ներկայացվել է Ղազախստանի և Ադրբեջանի հանրապետությունների մակրոտնտեսական քաղաքականության վերլուծություն՝ ներկայացնելով առկա տնտեսական նախադրյալները, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությանությունների դիրքը կարճաժամկետ հատվածում, քաղաքականությունների կոորդինացման արդյունավետությունը, Ազգային հարստությունների հիմնադրամների դերը, առկա հարկաբյուջետային կանոններն ու դրանց արդյունավետությունը, տնտեսությունների դիվերսիֆիկացման մակարդակներն ու ներառական աճի ապահովման հնարավորությունները՝ ամփոփելով շնորհանդեսը քաղաքականության բարելավմանը վերաբերող առաջարկներով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը: